«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - << Տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման նշանակությունն ու մեթոդները >>

ԱՌԱՐԿԱ - Դասվար

ՀԵՂԻՆԱԿ - Ռուզաննա Բալյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ - << ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------

Տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման նշանակությունն ու մեթոդները

Գլուխ 1. <<ԻՆՉ է հեքիաթը>>

1.1 << Հեքիաթի տեսակները>>

Գլուխ 2.<<Հեքիաթի դաստիարակչական նշանակությունը սովորողի զարգացման գործում>>

2.1 <<Հեքիաթի ուսուցման մեթոդները>>

Ներածություն

<<Տարրական դասարաններում հեքիաթի նշանակությունը և մեթոդները >> հետազոտական աշխատանքի շրջանակներում խնդիր ենք դրել մանրամասնորեն ուսումնասիրել հեքիաթների դերը երեխաների դաստիարակության գործում տարրական դասարաններում։

Ծնողները և մանկավարժները կարևոր է գիտակցեն,որ հատկապես իրենցից է կախված թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան։ Արդյո՞ք նա կլինի երջանիկ և վստահ իր ուժերին ու կարողություններին, թե կունենա կոմպլեքսներ՝ չարացած աշխարհի վրա,չունենալով որոշակի գիտելիք,հմտություն և պաշար։

Հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը,մտածողության ձևը։

Հեքիաթների դերը մանուկների դաստիարակության գործում ինչպես միշտ, նույնպես և այսօր արդիական է։

Այս աշխատանքը նպատակ ունի ներկայացնել մանկավարժական , հոգեբանական նորմերի ընդհանրական մի պատկեր երեխաների դաստիարակության ըթացքում հեքիաթների ունեցած դերի վերաբերյալ։

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

1. Երեխայի մտածողության,խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գորխծընթացի առանձնահատկությունների ուսումնասիրություն

2. Երեխայի զարգացման գործում գեքիաթի դաստիարակչական նշանակության վերհանում տարրական դասարաններում

Աշխատանքի մեթոդաբանական հիմքերը.

Աշխատանքը կատարված է համադրական և վերլուծական մեթոդների օգնությամբ,ուսումնասիրության ենթարկելով երեխայի կրթադաստիարակչական զարգացման ողջ ընթացքը՝ վերհանելով այդ գործընթացում հեքիաթների ունեցած դաստիարակչական նշանակությունը։

Փորձ է կատարվել աշխատանքում տեսականորեն առաջադրել հեքիաթների գործնական կիրառությանը նպաստող մի շարք տեսակետներ ընդհանրացումներ կատարել։

Աշխատանքում կարևորված է հեքիաթի դաստիարակչական դերն ու նշանակությունը և դրա կառուցման բարոյական սկզբունքները։

Տարրական դպրոցի սովորողների միջավայրում հեքիաթի ուսուցումը խոսքի զարգացման արդյունավետ միջոց է։

Հեքիաթի ուսուցման ընթացքում հարկավոր է խուսափել այն ներկայացնելու որպես բարին ու լավը պարտասրող ձանձրալի քարոզ։

Այդ դասերը պետք է մատուցվեն կախարդանքի պատրանք ստեղծող այնպիսի հնարքներով , ինչպիսին հենց հեքիաթն է։

Գլուխ 1. ԻՆՉ է հեքիաթը

Հեքիաթը բարոյական ու մտավոր զարգացման

Համար շատ և շատ նման է մայրական կաթին...

Այդ կաթն ինչպես սննդարար է եղել մեզանից

Քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի

և քառասուն դար մեզանից հետո ։

Ղ. Աղայան

Հայ բանահյուսության ամենահին, ամենատարածված և ամենահարուստ ժանրերից մեկը հեքիաթն է։

Հեքիաթի ստեղծողն ու պահպանողը միայն ժողովուրդն է ։Հեքիաթին հատուկ հնարանքները ստեղծվել ու ձևավորվել են դարերի ընթացքում։ Այն ոչ միայն սերտ կապի մեջ է եղել ժողովրդական կյանքի բոլոր ձևերի մեջ այլ,առասպելաբանության հետ։ Առանց ֆանտաստիկ հնարանքի հեքիաթ գոյություն չունի։

Հայ ժողովրդական հեքիաթների մեծագույն մասը ազգային ստեղծագործություններ են,որոնք այլ ազգերից տարբերվում են իրենց լեզվով, կյանքի ,կենցաղի, բնության նկարագրով և այլն։

Մարտնչելով բնության և հասարակության չար ուժերի դեմ, դեռ շատ վաղուց աշխատավորը ձգտել է թեթևացնել իր աշխատանքը, բարձրացնել նրա արդյունավետությունը, ապրել ուրախ ու երջանիկ։

Ա՜խ, ինչ հրաշք են այս հեքիաթները։ - մենք հիանում ենք, լսելով կամ կարդալով հեքիաթներ։ Յուրաքանչյուր մարդ մանկուց գիտի այս զգացումը։ Մեզանից յուրաքանչյուրը մանկության տարիներին սիրում էր այս կախարդական աշխարհը։ Ի վերջո, մանկության մեջ ամենակարևորը հեքիաթն է։ Փոքրիկ մարդը հեքիաթի օգնությամբ սովորում է հաղթահարել կյանքի տարբեր խոչընդոտներ, սովորում է հսկայական ու բազմազան աշխարհը, պատրաստվում է հասուն տարիքին։

Հեքիաթները նպաստում են երեխայի ստեղծագործական մտքի զարգացմանը, հուզական աշխարհի ձևավորմանն ու բարոյական նորմերի սահմանմանը։ Երեխաները ոչ միայն պետք է լսեն հեքիաթներ, այլև կարդան։

* Հայ բանահյուսության քրեստոմատիա ,Երևան ,1974 թ.

Հեքիաթները մանկության ,մարդկության շրջանի ծագում ունեն,բայց այսօր էլ շարունակում են ստեղծվել և իրենց կարևոր նշանակությամբ՝

անմիջականություն,պարզություն գրավչություն ու լավատեսություն , հուզել ընթերցողներին։

Հեքիաթը երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն: Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել, վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելքն այն է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Հարյուրամյակներ շարունակ մարդիկ ունեցել են շատ բարձր բարոյական և հոգևոր զարգացածության հասած առաջնորդներ, որոնք իրենց գիտակցությամբ անհամեմատ ավելի առաջ են եղել ժամանակակիցներից, նրանք իրենց առաքելությունն են համարել ուղղորդել և սատարել մարդկանց: Ուստի, հաշվի առնելով տեղային և ժամանակաշրջանին բնորոշ առանձնահատկությունները, նրանք ընտրել են տարբեր միջոցներ: Իմաստությունը մարդկանց փոխանցելու ձևերից մեկն էլ եղել է այն, ինչը հետագայում կոչվեց ազգային ավանդություն: Այսպիսով

ժողովրդական հեքիաթները, առակներն ու լեգենդները մարդկային էության շատ ավելի խորը իմացություն և հավերժական իմաստություն են կրում իրենց մեջ:

*https://thestrip.ru/

Պատմությունը զարմանալի է։ Մանկությունից ծանոթ հրաշալի աշխարհ, որտեղ բարին միշտ հաղթում է չարին։ Հեքիաթների գրքերի էջերում ապրում են խոսող կենդանիներ և վիշապներ, խիզախ հերոսներ և գեղեցիկ արքայադուստրեր, բարի փերիներ և չար կախարդներ։ Հեքիաթները կոչ են անում ոչ միայն հավատալ հրաշքներին, այլև սովորեցնում են բարություն, արձագանքողություն, չտրվել դժվարություններին, լսել ծնողներին և չդատել ուրիշներին արտաքինով։

Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը։ Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երևակայականն։ Հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝ «Լինում է, չի լինում», «Կար չկար», «Ժուկով ժամանակով», «Ժամանակով», «Չգիտեմ ո՛ր երկրում, ո՛ր թագավորության մեջ»։ Վերջաբանի համար էլ հատուկ արտահայտություններ կան, ինչպես՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին»։

Տարրական դասարանների մայրենիի ընթերցարաններում տեղ են գտել ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև դրանց գրական մշակումներ ՝ ընկերասիրության ու հավատարմության ,աշխատանքի ու աշխատասիրության, ազահության, խորամանկության վերաբերյալ։

Կրտսեր դպրոցականներին տեղեկացվում է, որ ժողովրդական հեքիաթների լավագույն մշակումներ են կատարել Հովհաննես Թումանյանը, Ղազարոս Աղայանը, Մկրտիչ Կորյունը, Ստեփան Զորյանը և ուրիշներ։ Ոչ ոք չգիտի , թե երբ է ծագել հեքիաթը։Սակայն մի բան պարզ է. երևի մարդուց, բառ ու բանի, նրա մտքի և երևակայության , նպատակների և երազանքների ձևավորման պահից։ Ժողովրդի կերպարը իր սրտով, մտքով, փիլիսոփայությամբ, հանճարեղությամբ արտացոլվում է նրա ստեղծած հեքիաթների մեջ։

Անմահ է նա , ով հեքիաթ ստեղծող է։ Այդ իսկ պատճառով հեքիաթը իր ժողովրդի հետ մնում է հավերժ։

Գլուխ 1.1 Հեքիաթի տեսակները

Ժողովուրդն է ստեղծում ու պահպանում հեքիաթը: Հեքիաթները բաժանվուն են տեսակների և ենթատեսակների: Տարրական դպրոցում աշակերտը պետք է տարբերակի հեքիաթի տեսակներն ու ենթատեսակները:

Հեքիաթները բաժանվում են երեք մեծ խմբի՝ հրաշապատում կամ կախարդական, կենդանական և իրապատում:

Հրաշապատում. վերջինս բանավոր , գեղարվեստական արձակ պատմվող հրաշապատում, երևակայական հնարանքների վրա հիմնված ստեղծագործություն է : Հրաշապատում հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի դեմ: Չար ուժեր են դևերը, կախարդները, վհուկները, վիշապները և այլն: Դեպքերը սովորաբար տեղի են ունենում ստորգետնյա թագավորությունում, այլ աշխարհներում, անհավատալին իրական է դառնում: հեքիաթի հերոսին օգնում են ձին, թռչունը, բարի պառավը, իմաստուն ծերունին:

Բոլոր հեքիաթների մեջ չարի և բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով:

Կենդանական հեքիաթներում անձնավորում են տարբեր կենդանիներ, պատկերվում են նրանց այլևայլ հատկությունները, վարքը: Նրանց միջոցով այլաբանորեն ներկայացվում են մարդկային որոշակի հատկանիշներ: Մի կողմից՝ չարություն, նախանձ, ագահություն, ժլատություն, մեծամտություն, մյուս կողմից՝ բարություն, անձնազոհություն, վեհանձնություն, ազնվություն, արդարամտություն, հավատարմություն, իմաստություն:

Իրապատում հեքիաթներում նկարագրվում է ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները: Մարդկանց մշտապես հուզել է հատկապես հալածվածների և ճնշվածների ճակատագիրը:

Շատ հեքիաթներում էլ ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արատները: Հեքիաթների հեղինակը ժողովուրդն է: Նա ստեղծել է դրանք, ինչպես առասպելները, էպոսը, առածները: Դա եղել է շատ հին ժամանակներում:

Ըստ ծագման հեքիաթների հաջորդ տեսակը հեղինակային հեքիաթներն են: Ինչպիսիք են ՝ Հանս Քրիստիան Անդերսենի , Օսկար Ուայլդի, Հովհաննես Թումանյանի , Ղազարոս Աղայանի ստեղծած հեքիաթները, որոնք այսպես, թե այնպես կրում են իրենց ստեղծողի անմիջական ազդեցությունը:Կա կարծիք, որ դրանք ազդում են անձի ձևավորման վրա և կարող են նաև բացասական ազդեցություն ունենալ:

Հաջորդը հոգեշտկողական հեքիաթներն են։ Նման հեքիաթները ուղված են որևէ բան շտկելու։ Դրանք կիրառվում են այն երեխաներ համար, ովքեր ունեն հուզական վարքային շփման խնդիրներ։ Այս հեքիաթների շնորհիվ հնարավոր է դառնում փոխարինել երեխայի ոչ էֆեկտիվ վարքը առավել արդյունավետ վարքով ։

Մեդիատիվ հեքիաթներ. դրանք արտացոլում են հարաբերությունների մոդելներ՝ ծնողների և երեխաների, ընկերների, մարդկանց և բնության , կենդանիների միջև։ Այս հեքիաթները շատ արդյունավետ են երեխաների և դեռահասների համար, ովքեր շրջապատի հանդեպ ունեն բացասական վերաբերմունք, սոցիալական փորձ։ Դրանք օգնում են հասկանալ, որ գոյություն ունի հարաբերությունների այլընտանքային մոդել , որը երեխայի մոտ ձևավորում է հավատ և վստահություն , որպեսզի ճիշտ կառուցի հարաբերությունները շրջապատի հետ։

Հեքիաթներին բնորոշ են չափազանցությունները , իմաստալից խոսքերը, ժողովրդական պատկերավոր արտահայտությունները։

Գլուխ 2.<<Հեքիաթի դաստիարակչական նշանակությունը սովորողի զարգացման գործում>>

Հեքիաթը մանկության այն վառ կանթեղներից է, որը լուսավորում է երեխայի աշխարհընկալումը, նպաստում է երեխայի արժեքային համակարգի ձևավորմանը: Այն երեխաների համար գոյություն ունեցող միակ իրականությունն է: Հեքիաթն ունի աշխարհաճանաչողական նշանակություն:

Երեխաների համար դժվար է ընկալել իրականությունը, ուստի այն նրանց մատուցվում է հեքիաթի միջոցով: Նրանք իրենց շրջապատին ծանոթանում են հեքիաթների միջոցով: Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Միաժամանակ այդ բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել, վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելքն այն է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Հեքիաթի ուսուցումը ծառայում է գիրք սիրելու կարևոր գործոնին: Բոլոր հեքիաթներում չարի և բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով:Հեքիաթի ուսուցումը նպաստում երեխաների մեջ սերմանելու բարին ու լուսավորը: Վերջինիս ուսուցման նպատակներից մեկն է ընթերցասիրության զարգացումը: Հեքիաթի ընթերցումը նպաստում է մայրենիից աշակերտների ձեռք բերած բառապաշարի ամրակայմանը, հարստացմանն ու գործնական կիրառմանը, զարգացնում է ինքնասիրությունը, բեմական խոսքը, բավարարում հետաքրքրությունները:

* Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Գիրք II, Երևան, 2005 թ

Հեքիաթները երեխաներին մատչելի լեզվով կյանք են սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին։

Երեխաները մեծահասակների քարոզներն այնքան հեշտ չեն ընկալում , որքան հեքիաթը։ Այն երեխաները որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել , ավելի շուտ են սովորել ճիշտ արտահայտել իրենց մտքերը։

Հեքիաթների դասավանդման նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական գործունեությունը։ Դրանք երեխայի խոսքը դարձնում են էմոցիոնալ և պատկերավոր, հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն են մշակում։

Երեխաները իրականությունը ընկալում են պատկերավոր։ Նրանք հեքիաթի միջոցով ընկալում են չարն ու բարին։ Քանի որ հեքիաթում միշտ հաղթում է բարին , երեխան կարողանում է հաղթահարել կյանքի դժվարությունները՝ բարու , հաղթանակի ակնկալիքով։ Նույն հեքիաթի մի քանի անգամ պատմելը երեխային կստիպի ավելի լավ ընկալել բուն ասելքիը։

Արտադասարանական ընթերցանության ժամերին կարելի է հանձնարարել ընթերցել ոչ միայն հայ , այլ նաև արտասահմանյան հայտնի և ոչ այնքան հայտնի հեքիաթագիրների հեքիաթները և անհրաժեշտ գրառումներ կատարել արտադասարանային ընթերցանության համար նախատեսված տետրերում։

Երեխայի համար հեքիաթների կարեւորության, նշանակության մասին կարելի է խոսել անվերջ։ Միանշանակորեն համակարծիք ենք որոշ հետազոտողների վերջնական եզրակացություններին՝ հրաշապատում հեքիաթների դերը երեխաների զարգացման եւ առողջ հոգեկերտվածք ձեւավորելու համար անգնահատելի եւ անփոխարինելի են5։ Ի վերջո, «երեխան, որը մեծացել է հեքիաթներ ու լեգենդներ ունկնդրելով, նկատելիորեն ավելի առողջ է, խելացի, քաջ և կրեատիվ>>։

Այսպիսով, հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ շատ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել։ Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես հաղթում է բարին։ Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը։

Հեքիաթները խթանում են աշակերտների բանավոր խոսքի զարգացմանը։ Նրանք հաճույքով են մասնակցում այդ աշխատանքներին։ Ուսուցիչը կարող է հեքիաթի ուսուցման ժամանակ իր առջև դնել հետևյալ նպատակները։

Նպատակները՝

Զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակությունները։

Աշակերտների մոտ ձևավորել տեսական և գործնական այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն նրանց շարունակելու տանը հեքիաթի ընթերցումը։

Սովորեցնել աշխատել բնագրի հետ։

Կարելի է մշակել հեքիաթի ուսուցման մի քանի ձևեր, որոնք շատ արդյունավետ են։

Խաղի, հեքիաթի, միջոցով երեխային մատուցել դասը, կամ ստուգել մատուցվածը։

Աշխատանքը դասի ժամանակ դառնում է կենդանի գործողություններ, որը երեխայի մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում ։Երեխան ոչ միայն տեսնում և ընդունում է, այլ նաև վերապրում է այդ ամենը։

Հեքիաթի միջոցով մանկավարժը կարող է հասնել մեծ հաջողությունների, ուսման մեջ առաջընթացի: Բոլորիս մանկությունից մինչև ծերություն ուղեկցում են հեքիաթները: Սկզբում հեքիաթում ենք կարդում, հետո արդեն իրական կյանքում փնտրում գտնում Քաջ Նազարին, Փանոսին, Հուռուն, Անխելք մարդուն և այսպես շարունակ: Հեքիաթի բարի հերոսի հետ պայքարում ենք ու անպայման ցանկանում հաղթել յոթ գլխանի վիշապին ու արքայադստերն ազատել նրա ձեռքից, կամ էլ պատժել խորթ մորն ու Մոխրոտիկի համար երջանկություն գտնել, փնտրել, գետնի տակից էլ գտնել կախարդի գավազանն ու ազատել քարացած քույրերին և այսպես շարունակ: Հայ մեծագույն հեքիաթագիր Թումանյանը գիտեր, որ հենց հեքիաթն է ամենակարճ ճանապարհը մարդու մեջ սերմանելու բարություն ու հոգատարություն, սրտացավություն, սեր ու հարգանք բնության ու շրջապատի հանդեպ, իսկ այդ հատկություններով օժտված մարդը հայրենիքը չսիրել պարզապես չի կարող: Այսօր էլ գրվում են բազմաթիվ հեքիաթներ, որոնք թեև արդեն ժամանակից հերոսներ ու շունչ ունեն, բայց առանցքը նույնն է՝ բարին ինչպես հին ու նոր բոլոր հեքիաթներում, էլի հաղթում է, ու հեքիաթներում ծնվող, ապրող ու փոքրիկին փոխանցվող այդ հավերժական արժեքներում էլ հենց այն սերմերն են, որոնք հետո արդեն պետք է երեխային դարձնեն հայրենասեր ու հայրենատեր քաղաքացի:

Գլուխ 2.1 Հեքիաթի ուսուցման մեթոդները

Գոյություն ունեն հեքիաթի ուսուցման բազմաթիվ մեթոդներ, հնարներ, որոնք թեման կդարձնեն բովանդակալից, հետաքրքիր, երեխաների մոտ կառաջացնի հեքիաթ ընթերցելու ցանկություն: Դասարանը բաժանել հնարավորինս մի քանի խմբերի, յուրաքանչյուր խմբի հանձնարարել իրենց կարդացած հեքիաթը ներկայացնել դասարանի ուշադրությանը: Կարելի է պատրաստել պաստառներ, նյութը դասարանին պատմել համապատասխան նկարազարդումներով երգի կամ երաժշտության զուգորդումով, մնջախաղով կամ էլ դերային խաղերի կամ բեմականացումների ձևով: Սովորողը կարդացածի բովանդակությունը գրավոր համառոտ շարադրում է կամ էլ գրում են կարծիք տվյալ ստեղծագործության մասին: Կարելի է դերայի խաղ կազմակերպել. սովորողներից մեկին հանձնարարվում է տեղեկություններ հավաքել տվյալ հեքիաթի հեղինակի, մասին, կերպարանավորել նրան:

Կարելի է մշակել հեքիաթի ուսուցման մի քանի ձևեր, որոնք շատ արդյունավետ են:

1. Խաղի, հեքիաթի, միջոցով երեխային մատուցել դասը, կամ ստուգել մատուցվածը:

2. Աշխատանքը դասի ժամանակ դառնում է կենդանի գործողություններ, որը երեխայի մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում

3. Երեխան ոչ միայն տեսնում և ընդունում է, այլ նաև վերապրում է այդ ամենը

Հեքիաթի դասավանդումը իրականացվում է չորս հիմնական քայլաշարով.

1. հեքիաթի ընթերցում՝բովանդակության ամբողջական ընկալման նպատակով

2.հեքիաթի երևակայական կողմի բացահայտում

3. հեքիաթի բարոյախոսական իմաստի՝գաղափարի վերհանում

4. հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն

Հեքիաթի ուսումնասիրումը, ինչպես պատմվածքինը իրականացվում է որպես գեղարվեստական ստեղծագործություն, որը նշանակում է. դասը պետք է իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրամասերի կիրառմամբ:

* Ջուլիետա Գյուլամիրյան ,Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018 թ.

Վերջինս իրականացնելուց հետո պետք է անցնել հեքիաթի բովանդակության երևակայական կողմի բացահայտմանը։

Երեխաները պետք է իրենք որոշեն , թե հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում (Կարմիր գլխարկը կարող էր տատիկին կարկանդակ տանել , գայլի հանդիպել),որոնք անիրական են ,երևակայական, մտացածին (նա չէր կարող գայլի հետ հաղորդակցման մեջ մտնել , որսորդները չէին կարող գայլի փորից կենդանի հանել Կարմիր գլխարկին և տատիկին)։

Հեքիաթը պատմել սովորեցնելիս կարելի է գործածել նաև ուսուցչի կամ աշակերտների կազմած նկարներով պլանը։

Հեքիաթի բովանդակության վերարտադրումը կարելի է իրականացնել ինչպես շարունակելով , այնպես էլ ընտրովի շարքերով, խմբերով, դերերով և այլ եղանակներով։

Օգտավետ է, երբ երեխաները անգիր են սովորում չափածո տողերը,որոնք հաճախ են կրկնվում հեքիաթներում, և պատմելիս անգիր արտասանել դրանք։

Հեքիաթի դասավանդման մեթոդական շղթա.

1. Խթանման փուլ՝նախապատրաստական զրույց հեքիաթի գաղափարի շուրջ

2. Աշակերտների կողմից հեքիաթի ընթերցում մտքում

3. Հեքիաթի բովանդակության ամբողջական ընթերցում

4. Աշակերտների բարձրաձայն ընթերցանություն աշակերտների կողմից մեկնաբանություններով

5. Բառային աշխատանք

6. Բնագրի ընթերցում՝ արտահայտիչ ընթերցանության կարողության ձևավորման նպատակով

7.Իմաստավորման փուլ՝ աշխատանք հեքիաթի երևակայական կողմի, լեզվի, հիմնական մտքի՝ գաղափարի բացահայտման ենթատեքստի կռահման ուղղությամբ

8. Նախապատրաստում պատմելու, պատմում

9. Կշռադատման փուլ՝ ամփոփում

Հեքիաթների ուսումնասիրման կշռադատման կամ ամփոփման փուլում կարելի է կիրառել փոխգործում մի մեթոդական մի հնար՝ օդապարիկ.

Պատրաստվում է օդապարիկ և յոթ ծրար, որոնց մեջ պետք է լցվեն յոթ հիմնաբառեր։

Ուսուցիչը բացատրում է օդապարիկի թռիչքի կանոնները, հանձարարվում է սպիտակ թղթերի վրա գրել այն յոթ արժեքները , որոնք առանձնացրել են սովորողները՝ հեքիաթում կատարված գործողությունները քննարկելիս։

Ճերմակ թղթերը համարակալվում են և յուրաքանչյուր խումբ իր գրածն ամրացնում է պարանին։ Դասարանը քննարկում է և առանձնացնում յոթ հիմնաբառերը , որոնք կրկնվում էին բոլոր խմբերի թղթերում, դրանք գրվում են գրատախտակին։

Աշակերտներն այդ բառերը դնում են առանձին պարկերի մեջ, ուսուցիչը բացատրում է , որ ունեցան յոթ ծրար, դրանք պետք են կարգավորեն օդապարիկի թռիչքը։

Երբ նրա միջի օդը սկսի սառչել, երեխաները պետք է հերթով դեն նետեն ծրարները, որ օդապարիկը թեթևանա և վեր բարձրանա։ Վերջում երեխաները պետք է որոշեն, թե ըստ ներկայացվող հեքիաթի բովանդակության՝ որն է այն կարևոր բառը, որը պետք է պահեն մինչև վերջ։ Աշակերտները հնարավոր է դժվարանան որոշելու բառերի կարևորությունը, քանի որ դրանք հեքիաթում ներկայացված են որպես արժեքներ։ Նրանք հերթով կգցեն բառերը և կմեկնաբանեն դրանցից յուրաքանչյուրի դերը մարդու կյանքում։ Հեքիաթի յոթ հիմնաբառերը որոնք կդառնան աստղեր և կփայլեն երկնքում կդառնան կերպարների արժեքներ։

Կարևորն այն չէ , թե աշակաերտները որ արժեքը կպահեն, որը կգցեն։ Կարևորն նրանց մեկնաբանություններն այդ արժեքների շուրջ։

Ըստ էության բոլորն էլ կարող են կարևոր լինել։

Եզրակացություն

<<Տարրական դասարաններում հեքիաթի դասավանդման նշանակությունն ու մեթոդները >> խորագրով հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության ենք ենթարկել հեքիաթի ուսուցման կարևորությանն առնչվող կետերը՝ այն եզրակացությանը հանգելով, որ խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այստեղ խոսքը նախևառաջ հեքիաթների մասին է:

Հեքիաթը մեծ նշանակություն երեխայի անձի ձևավորման համար որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորմանը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես հաղթում է բարին: Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը: Հեքիաթների հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն, ինչ որ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ, տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում: Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ, ուստի հեքիաթը թույլ է տալիս դաստիարակել՝ դրականի վրա հենվելով:

Ի վերջո, հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր: Ուստի անհրաժեշտ է հեքիաթների տարբեր տեսակների առկայությունից ընտրելով համապատասխանը՝ նպաստել երեխայի աշխարհաճանաչողական, երևակայական, ստեղծագործական և խոսակցական մակարդակների իրացմանը համապատասխան մեթոդների կիրառմամբ:

Հեքիաթի ուսուցումից երեխաները կվերհիշեն ժողովրդական բանահյուսության տարրերը , կհարստացնեն իրենց մտահորիզոնը հեքիաթի մասին գիտելիքներով:

Ձեռք կբերեն տեղեկություններ հեքիաթագիրների կյանքի վերաբերյալ, կկարողանան գործնականում տարբերակել իրապատում և հրաշապատում հեքիաթները :

Կկառուցեն նկարագրական գեղեցիկ խոսք:

Աշակերտները հեքիաթները վերարտադրելիս կհասնեն նրան , որ հարազատ կմնան նրա լեզվին ու ոճին , հաճախ կպատմեն հենց այն բարբառով , որով շարադրված է հեքիաթը , կգործածեն հերոսների խոսքերը , արտահայտությունները, ժողովրդի բառն ու բանը։

Անշուշտ այդ դեպքում երեխաները պետք է որ ասեն հեքիաթքւմ գործածված բառերի և արտահայտությունների համարժեքները, երբ բացատրված կլինեն անծանոթ բառերը։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ բանահյուսության քրեստոմատիա ,Երևան ,1974 թ.

2. Նախաշավիղ, 1-2 , 2004 թ.

3. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, Գիրք II, Երևան, 2005 թ.

4. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995 թ.

5. Ջուլիետա Գյուլամիրյան ,Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018 թ.

6. http://dpir.mskh.am/

7. https://thestrip.ru/